<< Կրթություն շաբաթաթերթ>>

12.01.2023թ.

Հայտարարություն

Հայտարավում է մրցույթ Արմավիրի մարզի <<Հայկաշենի Գ. Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տեխնոլոգիա (4 դասաժամ) , ֆիզկուլտուրա (9 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:
Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:
Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը որին հավակնում է : (Ձև 1)

2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ <Հանրակրթության մասին> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3. Անձնագրի պատճենը,

4. Ինքնակենսագրություն (Ձև 1),

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնգիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները,(դրանց առկայության դեպքում)

6. Մեկ լուսանկար՝ 3 x4 չափի

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:
Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակի հետ:
Փաստաթղթերն ընդունվում են **հունվարի 18-ից** մինչև **հունվարի 31-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10.00-ից մինչև 15.00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:
Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի: Մրցույթը տեղի կունենա **փետրվարի 3-ին ժամը 14.00-ին**, Արմավիրի մարզի Հայկաշենի Գ. Կիրակոսյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցե՝ Արմավիրի մարզ գ. Հայկաշեն 3-րդ փողոց, 4շենք:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 055-83-45-35 հեռախոսահամարով: